

Պելճիքայի խորհրդարանի անդամներ հանդիպումներ ունեցան Արցախի Հանրապետության խորհրդարանին մեջ

Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուկեան Հոկտեմբեր 30-ին ընդունեց Պելճիքայի խորհրդարանի անդամ, «Ռեֆորմիստական շարժում» կուսակցության միջազգային կապերու գծով նախագահ Ժան-Ժազ Ֆլաօն եւ նույն կուսակցության միջազգային կապերու փոխնախագահ Ճուլի Սզման, որոնք Արցախի ժամանած էին Հայ Դատի Եւրոպայի յանձնարուածքի նախագահ Գասպար Կարապետեանի եւ յանձնարուածքի գործադիր տնօրէն Հեղինէ Էլիսեանի ուղեկցութեամբ:

Ողջունելով հիւրերը՝ խորհրդարանի ղեկավարը նշած է, որ այս հանդիպումը յարմար առիթ է՝ խօսելու մարդկային ու ժողովրդավարական այն արժէքներուն մասին, որոնք կը միաւորեն երկու երկիրներուն ժողովուրդները՝ անկախ իրենց ծննդավայրէն: Աշոտ Ղուկեան նաեւ կարեւորութեամբ անդրադարձած է մէկ տարի առաջ Արցախի եւ Պելճիքայի միջեւ ձեւաւորուած յարաբերութիւններուն՝ յատկապէս ընդգծելով Արցախի Հանրապետութիւն-Պելճիքայի Թագաւորութիւն Ֆլանտրիայի խորհրդարան բարեկամական խումբի եւ Արցախի Հանրապետութիւն-Պելճիքա Փրանսախօս օրէնսդիրներու, գիտական ու հասարակական ոլորտներու ներկայացուցիչներուն հետ բարեկամութեան շրջանակի դերակատարութիւնը: Այս առումով խորհրդարանի ղեկավարը առաջարկած է մտածել համագործակցութեան յստակ օրակարգի ձեւաւորման մասին: Շնորհակալութիւն յայտնելով ընդունելութեան համար՝ Պելճիքայի խորհրդարանի անդամ Ժան-Ժազ Ֆլաօ նշած է, որ խորհրդարաններն ու խորհրդականները պէտք է կարենան յարաբերիլ առանց դժուարութիւններու, այդ մէկը թոյլ կու տայ ապահովելու տնտեսութիւններու եւ այլ կարեւոր բնագաւառներու զարգացումը:



Հանդիպման ընթացքին կողմերը քննարկել են նաեւ միջկուսակցական համագործակցութեան հնարաւորութիւններուն եւ խորհրդարանին ու քաղաքական կեանքին մէջ կանանց ներկայացուածութեան վերաբերող թեմաներ: Հանդիպման ներկայ եղած են ԱԺ նախագահի տեղակալ, Արցախի Հանրապետութիւն-Պելճիքա Փրանսախօս օրէնսդիրներու, գիտական ու հասարակական ոլորտներու ներկայացուցիչներուն հետ բարեկամութեան շրջանակի նախագահ Վահրամ Բալայեան, ԱԺ արտաքին յարաբերութիւններու մշտական յանձնաժողովի նախագահ Արդիկ Մխիթարեան եւ Արտաքին գործերու նախարարի տեղակալ Ֆելիքս Խաչատրեան:

Կեանքին հրաժեշտ տուաւ Ցեղասպանութենէն վերապրած գանատահայ Սիրվարդ Քիրտեան

Սիրվարդ Քիրիչճեան Քիրտեան ծնած է 14 Օգոստոս 1912-ին, Էրզրում: Ան կրտսեր զաւակն է Նդիշէ եւ Նփրաքսի Քիրիչճեան ամուլին: Հայրը եղած է կերպասի վաճառական: Անոր 3 եղբայրները մահացած են տեղահանութեան օրերուն՝ վարակուելով անբուժելի հիւանդութենէ: Հայրն ու հօրեղբայրը ցեղասպանութեան առաջին օրերուն իսկ ձերբակալուելու եւ սպաննուելու են: Սիրվարդ երեք տարեկանին իր ընտանիքին հետ տեղահանուած է եւ 6 ամիս անապատներուն մէջ թափառելէ ետք, ինչպէս նաեւ ճամբուն վրայ իր մեծ հայրն ու եղբայրներէն Վահրամը կորսնցնելէ ետք հասած է Իրաք, Մուսուլ իր մօր եւ քրոջ՝ Արաքսիին հետ:



Տարիներ ետք ան իր մօր եւ քրոջ հետ տեղափոխուած է Սուրիա, Հալէպ, ուր ապրած է որբանոցներու մէջ. յաճախած է Հալէպի Կիլիկեան վարժարանը: 15 տարեկանին կ'ամուսնանայ Էրզրումցի Խաչիկ Քիրտեանի հետ, որուն հետ կը բախտաւորուի չորս զաւակներով: 1960-ին կը փոխադրուին Պէյրութ, ուր Խաչիկ կը մահանայ 1974-ին:

1991-ին հաստատուած է Թորոնթօ, ուր իր մահկանացուն կնքեց Շաբաթ, 27 Հոկտեմբեր 2018-ին: Ան 2012 թուականին, իր ծննդեան 100-ամեակին առթիւ շնորհաւորական նամակներ ստացած է ՆՍՕՏՏ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսէն, Անգլիոյ թագուհի Էլիզապէթ Բ.-էն եւ Գանատայի ընդհանուր կառավարիչէն:

Մեծարանքի եւ երախտագիտութեան սիրոյ սեղան՝ Գերաշնորհ Տ. Խաժակ Արք. Յակոբեանի քահանայական ձեռնադրութեան 50-ամեակին առթիւ



Կարդալ էջ 5




HONDA GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4
514 327-7777
www.hondagabriel.com

Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobassarian

HONDA



Les saveurs
de l'automne!



MARCHÉ

ADONIS

The flavors of Autumn

Ste-Catherine - Griffintown - Anjou - Sauvé - Place Vertu- DDO - Brossard - Laval - Laval Est - Gatineau
Scarborough - Mississauga

www.groupeadonis.ca /   

Հայաստանի Նոր Բարեկամները՝ Ըստ Ծոց Պոլսերնի

Սպիտակ տան ազգային անվտանգության խորհրդակալան Ճոն Պլյթերը Հայաստանեան իր առաքելութիւնը լրումին հասցուց՝ առանց յուսախաբ ընելու: Ան չթաքցուց իր կառավարութեան հետապնդած նպատակները տարածաշրջանէն ներս եւ չքողարկեց ամերիկեան ակնկալիքները Հայաստանէն:

Պոլմբենը նոյնիսկ խոյս չտուաւ Հայաստանի մէջ իշխանութեան փոփոխութիւնը հովանաւորողի տպաւորութիւնը ձգելէ: Ոգեւորուած իր թողած տպաւորութեանէն՝ թելադրական ոճով ան յայտնեց լրագրողներուն. «Յե՛թէ (դեկտեմբերի) ընտրութիւններու արդիւնքներով Փաշինեանը եւ իր քաղաքական խմբակը մեծ մասնաթիւ տանան, ատիկա լաւ հնարաւորութիւն կ'ըլլայ (ղարբաւորեան խնդրի) կարգաւորման հարցի մէջ փճուական քայլերու համար»:

Կասկած չկայ, թէ Պոլիթընին համար ի՛նչ կրնան ըլլալ այդ վճռական քայլերը, երբ նկատի ունենանք շաբաթ՝ մը առաջ Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու պաշտօնաւարտ դեսպան Ռիչըրտ Միլզի եւ քանի մը օր առաջ Պաքուի մէջ Մինսքի խմբակի ամերիկացի նախկին համաձայնագահ Ճէյմս Ուորլիթի խրատականները: Այս երկու դիւանագէտները կը յորդորէին Հայաստանը, պարզ եւ միեկին, որ խաղաղութեան պայմանը հոգեկոտ կերպարգաժն է:

Սակայն, հետեւելով Պոլժընի զեւանագիտական տողանցքին, ի յայտ կու գայ, որ Միացեալ Նահանգներու համար հողերու վերադարձով «խաղաղութիւն»-ը ոչ թէ նպատակ է, այլ՝ միջոց: Բուն նպատակը այլ բան է: Այդ նպատակը Հայաստան-Արարկէյճան սահմանագիծին վրայ չի գտնուիր, այլ՝ Հայաստան-Իրան սահմանագիծին վրայ:

«Ազատութիւն» ձայնասփիւռի հարցազրույցին ընթացքին, Պոլժըն հաստատեց թէ իր կառավարութիւնը հետամուտ է «սեղմել Իրանի շուրջ օդակը»: Հետեւաբար պէտք չէ միամիտ ըլլալ ու խաբուիլ, երբ Պոլժըն կը պնդէ, որ «Հայ-ամերիկեան յարաբերութիւնները մեզի համար ռազմավարական նշանակութիւն ունին», որովհետեւ այս «ռազմավարական նշանակութիւնը» գլխաւորաբար կը վերաբերի «Իրանի շուրջ օդակը սեղմել»-ու գործին մէջ՝ Հայաստանին վերապահուած դերակատարութեան:

*Ոչ թե՛ «խաղաղութեան» համար, այլ «օղակը սեղմելու» համար է, որ կարելու-
թուլիլն կը ստանայ դարաբաղեան հարցին լուծում բերելու ամբրիկեան շտապողա-
կանութիւնը:*

Իսկ ինչ կը վերաբերի հայ-իրանական դարաւոր բարեկամութեան, Պոլսըն հարց
չի տեսներ, եթէ այդ բարեկամութիւնը այս գործընթացով վատթարանայ, որովհետեւ
Հայաստան այլընտրանք ունի: Այսինքն Հայաստանի համար այլ հարեւան երկիրնե-
րու հետ նորոգեալ բարեկամութիւններ հաստատելու առիթը կ'ընծալուի:

Բացառաբար ամերիկեան շահերէ մեկնող մատնանշուած այս այլընտրանքը կ'երաշխաւորուի, ըստ Պոլթընի, Ղարաբաղեան հարցի կարգաւորումով: Իր իսկ բացատրութեամբ, «Կը կարծեմ, որ ներկայիս հանգամանքները կ'ընդգծեն Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ փոխադրած համաձայնութեան հասնելու կարեւորութիւնը, քանի որ եթէ այդ սղդի ունենայ, կը բացուի հայ-ազրպէյճանական սահմանը: Թուրքիայի հետ սահմանը, կը կարծեմ, եւս կը բացուի»:

Որպեսզի սահմաններ բացուելու եւ նոր բարեկամ հարեւաններ ունենալու խայծը Հայաստանին համար դիւրամարս դառնայ, Պոլժընը կը յիշեցնէ, որ Հայաստան առիթը կ'ունենայ ամերիկեան գէնըքը գնելու, ինչպէս նաեւ՝ ներդրումներ ստանալու ամերիկեան գործարարներէ:

Անշուշտ ան չ'անդրադառնար այն օրինական սահմանափակումներուն, որոնք կը գրուին վաճառուած ամերիկեան զէնքերու գործածութեան վրայ: Ան նաեւ կը մոռնայ բացատրելու, թէ սահմաններու բացումէն ետք Հայաստան ինչո՞ւ ամերիկեան զէնքեր պիտի գնէ, երբ թշնամի հարեւաններ ալլեւ գոյութիւն չունին: Հաւանաբար պոլիթնիստն հաշուարկին մէջ մտած է այն հաւանականութիւնը, որ Իրան, Վրաստան կամ Ռուսիա, կամ՝ երեքը միասնաբար, նոր թշնամիներու պիտի վերածուին Հայաստանի համար:

Ինչ կը վերաբերի ակնկալուած ներդրումներուն, ամերիկեան գործարարներու զբաղակաճ եւ առեւտրական գործառնութիւնները միշտ ալ ընդունելի եւ մեծապէս գնահատելի եղած են մեր Հայրենիքին համար: Նման ներդրումները այնքան ալ կախեալ չեն եղած դարաբաղեան հարցի բարուք յուծումէն:

Վերջապահության հասնելու խորհուրդներն էլ ստացուի հետեւեալ պատկերը:

Եթէ դարաբաղեան հարցը կարգաւորուի, Պոլսն «կը կարծէ», որ Ազրպէյճան կը բանայ իր սահմանը Հայաստանի հետ: Ապա Պոլսն կը շարունակէ «կարծել», որ Թուրքիա եւս կը բանայ իր սահմանները:

Սահմաններու այս կարծեցեալ բացումին դիմաց, հայկական կողմը ազատագրուած հողեր կը վերադարձնէ Ազրայէյճանին եւ կը փակէ իր սահմանը Իրանին դիմաց:

Պոլժրենեան լուծուժմով մենք պիտի կորսնցնենք հայրենական հողեր եւ՝ բարեկամութիւնը դարաւոր հարեան երկրի մը, որուն հետ մեր գործակցութիւնը ոչ միայն ռազմավարական, այլեւ կենսական նշանակութիւն ունի:

Այսպիսով, սակայն, պիտի շահինք նոր բարեկամ հարեւաններ: Պահ մը կրնա՞նք պատկերացնել մեր նոր բարեկամ հարեւանները՝ Ազրայէճան եւ Թուրքիա: Անշուշտ Պոլթընը կրնայ մեզ խրատել, որ մեր «պատմական կադապարներէն» պէտք է ձերբազատինք:

ՍԵՌՈ ՊՈՅԱՃԵԱՆ

Սահմանադրական գործընթացի իրական նորմերը

Քաղաքացիական անհնազանդությունը, այս կէտին վրայ, սպառնաժէք է հնքզինք: Այս կէտէն անդին, այդ գէնքը ուղղուած է մեր ազգային գերագոյն շահերուն դէմ եւ, առաջին հերթին, ժողովրդային շարժման դէմ:

ՀՀ Սահմանադրութիւնը ձեւաւորուած է Արեւմտեան ժողովրդավարական կարգերու էական սկզբունքներով: Ան կը ձգտի քաղաքական հակամարտ ուժերու խաղաղ հաւասարակշռութեան: Ան չի ջնջեր տարբերութիւնները: Զի խեղդեր հակադրութիւնները: Հակառակ յաճախ յեղեղուած եւ ոչ-գիտակ կարծիքներու, ան նաեւ, ինքն ըստ ինքեան, չի ներկայացներ ազգային ընդհանուր համաձայնութիւնը: Ան օրինակարգուած բեմ կը հայթայթէ հակընդդէմ ուժերուն, որպէսզի այս վերջինները կԱՌՈՂԱՆԱՆ դարբնէյ այդ համաձայնութիւնը ամէնօրեայ փոխներգործութեամբ:

Յիշեալ փոխներգործութեան անունը, սիրելի գործընկերներ, ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ է: Եւ բանակցութիւնը կ'ենթարէ երկուստեք յստակացնել առաջագրութիւնները, հաստատել ընդհանուր թիրախները, կողմերու առաջնահերթութիւնները, կարելիներն ու անկարելիները, բխրացնել բանակցութեան աշխատանքային դասին եւ գործել փոխգիտումային մտաբանութեամբ:

Բոլոր փաստերը ցոյց կու տան, որ Պր. Վարչապետին կողմէ նշանակուած բանակցողները չեն կրցած բանակցել: Անոնք խօսած են վերջնագրի լեզուով: Անոնք մեթոժած են նոյնիսկ նկատի առնել Դաշնակցութեան առաջարկները: Անոնք առհասարակ չեն գիրտած, թէ որու՞ն հետ կը բանակցէին: Կամ չեն ուզած բանակցային գործընթացի այդ բանալի պայմանի իւրաքանչեւ եւ կիրարկել:

Պէտք է ենթադրել, որ Պր. Վարչապետին կողմէ բանակցողները գործած են այն գիրքերէն, որ այս բանակցային գործընթացը ընդամէնը իրենց կողմէ ստեղծուած սնտոի բեմադրութիւն է: Գործած են այն թիւր համոզմամբ, որ իրենք մեծամասնութիւն են, այս կէտին վրայ, Ազգային ժողովին մէջ առանց պահ մը իսկ անդրադառնալուն, որ իրենք փոքրամասնութիւն մըն են հանրացալուծման հասնելու իրենց միակ ճամբան լուրջ եւ չրճահալեաց բանակցութիւնն է:

Ըսած եմ ասկէ առաջ եւ կը կրկնեմ: Փողոցի գործողութիւնը գտած է վերջ: Հիմա այլեւս ժամանակն է, որ գործէ քաղաքական դատողութիւնը: ԲՈՂՈՐ ԿՈՂՄԵՐՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆԸ: Քաղաքացիական անհնազանդութեան զէնքը, այս կէտին վրայ, սպառած է ինքզինք: Այս կէտէն անդին, այդ զէնքը ուղղուած է մեր ազգային գերագոյն շահերուն դէմ եւ, առաջին հերթին, ժողովրդային շարժման դէմ: Պր. Վարչապետը ունի միայն մէկ շինիչ եւ ազգանպաստ ճանապարհ: Բանակցութիւններու ճանապարհը: Եւ այդ ճամբուն վրայ մաքսիմալիստ լուծումներ չեն կրնար ըլլալ: Եւ բոլոր անոնց, որոնք կը շարունակեն ամէն քալափոխի այսպէսեւ Պաշտակցութիւնը քաղաքական բեմի ծախսաւերութիւններուն համար, կ'ուզեմ անկեղծօրէն յիշեցնել, որ Պաշտակցութիւնը չ'է թշնամին: Պաշտակցութիւնը հայոց հայրենիքին անկեղծ գինուորն է:

Կարօ Արմենեան

Ascenseur **Adams** Elevator
Services Inc.
PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4
RBQ# 1812-6474-22

www.adamselevator.ca

TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613

*RENOVATION, REPAIRS, MAINTENANCE,
INSTALLATION OF ELEVATORS.*

Eddie, Pedro, Joyce Oughourlian

INTERNATIONAL SALES

Established Import-Export Company in Montréal, is looking for a Sales Person for it's international Markets.

Requirements :

- Fully Bilingual (English & French)
- Minimum 3 years sales experience in Canada (Not Telemarketing)
- Must be Canadian Citizen and detain Canadian Passport
- Good computer skills (Outlook, Excel, Sap, Nav)
- Would be available to travel abroad

This is a permanent career opportunity for an aggressive and intelligent person.
Please send your CV to: JamesEkonomakis@cygintl.com

Վանգուվերի ՀՕՄ-ի «Արագ» մասնաճյուղի հիմնադրութեան 40-ամեակին նուիրուած ձեռնարկ



ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան 25-րդ սեմինարը նուիրուած էր Հայաստանի Առաջին Հանրապետութեան 100-ամեակին եւ Վանգուվերի «Արագ» մասնաճյուղի հիմնադրութեան 40-ամեակին:

40-ամեակի տօնակատարութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, 22 Սեպտեմբեր 2018-ին, երեկոյեան ժամը 7:00ին, Վանգուվերի կեդրոնը գտնուող Շիրաթոն պանդոկէն ներս: Ձեռնարկը ծայր առաւ Հայաստանի եւ Գանատայի քայքայեցներով:

Սրահը լեցուած էր Վանգուվերի հայ համայնքի զաւակներով եւ Հայ Օգնութեան Միութեան սուրբ գաղափարին ծառայող եւ հաւատացող հայորդիներով: Միջոցառումը իւրայատուկ ջերմութեամբ ողողուած էր:

Վանգուվերի ՀՕՄ-ի «Արագ» մասնաճյուղի ատենապետուհի ընկերուհի Սօսի Թերզեան, իր բարի գալուստի խօսքէն ետք, ներկայացուց օրուան յայտագիրը: Ապա բեմ հրաւիրեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հայր Գարեգին Վարդապետ Շիրաթոնեանը, որ կատարեց Տէրութեան աղօթքը, որմէ ետք պաշտօնապէս բացուած նկատուեցաւ երեկոն:

խօսք առաւ հիմնադիր վարչութեան անդամուհիներէն ընկերուհի Սօնա Պետրոսեան: Ան իր երախտքի եւ հպարտութեան խօսքը փոխանցեց Հայ Օգնութեան Միութեան «Արագ» մասնաճյուղին, որ 40 երկար տարիներէ ի վեր կառուած կը մնայ վանգուվերահայ գաղութի ծառայութեան:

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան խօսքը փոխանցեց ընկերուհի Անի Օհանեան՝ շնորհակտելով Վանգուվերի «Արագ» մասնաճյուղի հիմնադրութեան 40-ամեակը, մաղթելով որ ընկերուհիները շարունակեն իրենց երթն ու սրբազան գործը:

Ներկայ էր նաեւ Գանատայի Հայոց Թեմի բարեջան առաջնորդ Գերշ. Տէր Բարեգէն Արքեպիսկոպոս Չարեան, որ իր կարգին փոխանցեց մասնաճյուղին կողմէ յատուկ նուէր՝ օրուան ատենապետուհի ընկերուհի Սօսի Թերզեանին: Գեղարուեստական բաժինով հանդէս եկաւ Վանգուվերի «Սասուն» պարախումբը, ապա Մոնթրէալէն հրաւիրուած երգիչ Գօգօ Թիւթիւնճեան ճոխացուց երեկոն:

Մտղոյիկ Սիւլաքեան Չափաճեան

Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի աշակերտները կը մասնակցին RSEQ Մոնթրէալի կազմակերպած «cross-country» վազքի միջոցառման



Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի նախակրթարանի 5-րդ եւ 6-րդ կարգէն եւ երկրորդականի բոլոր կարգերէն աշակերտ-աշակերտուհիներ մասնակցեցան Réseau du Sport Etudiant du Québec (RSEQ) Մոնթրէալի կազմակերպած «cross-country» վազքի միջոցառման, որուն նպատակն էր մէկտեղել Մոնթրէալի հարիւրէ աւելի դպրոցներու աշակերտները եւ մարզական նախապատրաստական վարժութիւն տալ անոնց՝ վազքի մարզաձեւին առնչութեամբ: Նախակրթարանի աշակերտներուն համար նախատեսուած էր վազել 1.9 քմ., իսկ երկրորդականի աշակերտներուն՝ 5 քմ.: Միջոցառումը տեղի ունեցաւ Չորեքշաբթի, 10 եւ Հինգշաբթի, 11 Հոկտեմբերին, Parc Jean Drapeau-ի մէջ:

Ոգեւորիչ էր աշակերտներուն աշխոյժ մասնակցութիւնն ու խանդավառ արտայայտութիւնները, հակառակ ցուրտ եւ անձրեւոտ օդին:

Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝
(514) 284-7676

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ...

ԼԱԻՍԳՈՅՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

Linda Kharaboyan Notaire Notary Ձեր Խոտարական եւ Իրաւաբանական հարցերն ու ծրագիրները վստահեցէք մնալ Vos affaires. À cœur. Therrien Couture 3111, boul. St-Martin O., #500 Laval (Québec) H7T 0K2 t. 450 682.5514 • 855 633.6326 linda.kharaboyan@therriencouture.com www.therriencouture.com	VIZUALIS optométriste DR SHANT DONABEDIAN Centre d'Achat Fairview • Fairview Mall Pointe Claire 514 695 2555 • VIZUALIS.CA	PHOTO Cristal (514) 744 4313 Mariage - Portrait - Graduation Restauration - Commercial - Passeport Publicité - Lamination - Encadrement Video - Reproduction 647 Boul. Decarie VSL Montreal QC H4L 3L3 photocrystal@hotmail.com www.photocrystal.com
Assura Bien inc. Cabinet en assurance de dommages et de services financiers Ապահովագրական գրասենեակ KRIKOR ABRAKIAN VAHAN MATOSSIAN 970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc, H4T 1W7 T: 514.903.3999	RITA BAGHDASSARIAN Conseillère en Sécurité Financière Revenu Garantie Viager COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELI) • CRÉATION D'HÉRITAGE • REER, FERR RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉ • ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE & COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT 3820, boul. Lévesque Ouest, Bureau 101, Laval Qc. H7V 1E8 Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262 ritabagh@yahoo.com	TAXI MIRABEL 450-430-2650 Taxi Mirabel Հայկական հաստատութիւնը կարիքը ունի 20 հայ թաքսի վարորդի Միքաէլ շրջանին մէջ: Հաճեցէք հեռաձայնել Արային (514) 979-1317 քիւին: Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number, besoin de chauffeur de taxi. Call/Appelez: (514) 979 1317
RE/MAX RE/MAX 3000 inc. Agence immobilière Elie Berberian Courtier immobilier Real Estate Broker C 514.519.3543 B 514.333.3000	ONGLES CAROLE HAMPARTSOUMIAN POSE D'ONGLES RÉSINE ET POUDRE MANICURE & PÉDICURE AVEC GEL RECOUVREMENT SUR ONGLES NATURELS Առողջ եղունակներու խնամքի համար հեռաձայնել՝ 514 941-0014 LAVAL	KRIKOR MAROUNIAN RLU Independent Financial Security Broker Life Insurance • Disability & Critical Illness Insurance Group Insurance • Pension Plans Travel/Visitor Medical Insurance 11820 General Giraud Montreal, QC H4J 2H6 Res: (514) 332-7021 Fax: (514) 332-7376 Cell: (514) 927-2666 krikormar@gmail.com
FIVE STAR ELECTRIQUE CINQ ÉTOILES SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING RESIDENTIAL-COMMERCIAL BEDROS NALPATIAN 442, LA RIVIÈRE, LAVAL, QC. TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997 E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM	CENTUM™ Metrocap Wealth Solutions Inc. License # 12147 Mortgage programs for new comers to Canada New purchases Refinancing Second mortgages Self employed Low credit score Access to top lenders including private lenders 416.662.6650 cell centum.ca/sosie_demersesian	ALINE BEKEREJIAN NOTAIRE - NOTARY 180, rue Fleury ouest Montréal, Qc, H3L1T5 T 514.382.7222 F 514.381.1818 aline.b@notarius.net www.abnotaires.com Նոտար եւ Իրաւաբանական Խորհրդատու՝ Ալին Դեքերեճեան

Մեծարանքի եւ երախտագիտութեան սիրոյ սեղան՝ Գերաշնորհ Տ. Խաժակ Արք. Յակոբեանի քահանայական ձեռնադրութեան 50-ամեակին առթիւ

Ամեակներն ու յորելինական հանգիստութիւնները հանգրուաններ են, որոնց վրայ կանգ առնելով, նժարի վրայ կը դնենք ապրուած կեանք մը եւ վերանորոգ կամքով կը նայինք մեր դիմաց բացուող հորիզոններուն: Իսկ երբ նկատի կ'առնենք ամբողջանուէր եկեղեցականի մը աւելի քան կէս դարու ծառայութիւնն ու վաստակը, կրնանք աներկբայօրէն հաստատել, որ արգասաբեր եղած են անոր կեանքն ու ծառայական կենսագրութիւնը:

Արդարեւ, 2018 տարին յորելինական հանգրուան մը կը հանգիստանայ Գառնատայի Հայոց Թեմի անդրանիկ առաջնորդ Գերաշնորհ Տ. Խաժակ Արք. Յակոբեանի կեանքին մէջ ու ծառայական առաքելութեան ճամբուն վրայ: 1968 Մայիս 28-ին, Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան 50-ամեակին ան կը ձեռնադրուի կուսակրօն քահանայ, եւ 50 տարի շարունակ եկեղեցականի կոչումն ու առաքելութիւնը կ'ընդելուզէ իր կեանքին եւ էութեան հետ:

Այս առթիւ, հովանաւորութեամբ Գառնատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Բաբգէն Արք. Ջարեանի եւ կազմակերպութեամբ Ազգային Առաջնորդարանին, Շաբաթ, 27 Հոկտեմբեր 2018-ի կէսօրուան ժամը 1:00-ին, Մոնթրէալի Հայ կեդրոնի «Աւետիս Ահարոնեան» սրահին մէջ կազմակերպուեցաւ մեծարանքի եւ երախտագիտութեան սիրոյ սեղան:

Բարի գալուստի ու ողջոյնի խօսք արտասանեց Թեմիս առաջնորդական փոխանորդ Գերապատիւ Տ. Գեղարդ Մ. Վրդ. Քիւսպէկեան, որ շնորհաւորեց Խաժակ Արքանը եւ վեր առաւ ծառայա-

կան կեանքին մէջ անոր վաստակն ու ներդրումը, նշելով որ ան իր ծառայական կեանքի մեծ մասը անսակարկօրէն նուիրած է մեր Թեմին:

Այնուհետեւ, Հայր Գեղարդ ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Հայրապետական Օրհնութեան Գիրը, որուն մէջ Նորին Ս. Օծութիւնը կը շնորհաւորէր Խաժակ Արքանին յորելինական տարին եւ վեր առնելով անոր հաւատարմութեամբ իրացած ծառայութիւնը, կը շնորհէր. «50 տարիներու ընթացքին ձեր ստանձնած բոլոր պատասխանատուութիւններուն մէջ ցուցաբերեցիք գործակցութեան ոգի, հոգեւորական թէ աշխարհական գործակիցներու նկատմամբ, եւ միշտ մնացիք հաւատարիմ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան սկզբունքներուն ու առաքելութեան»:

Աւարտին, Նորին Ս. Օծութիւնը մեծապէս կը գնահատէր Խաժակ Արքանին բազմամեայ վաստակը, կ'ողջունէր անոր ծառայական կեանքի այս կարեւոր հանգրուանը ու կը մղթէր առողջ կեանք մը՝ լեցուն Ս. Հոգիին շնորհներով:

Յանուն Ազգային վարչութեան, սրտի խօսք արտասանեց ատենապետուհին՝ տիկին Մոլիկ Թերզեանը, որ վեր առաւ Խաժակ Արքանին առաքելութիւններն ու անխնայ հոգեւորականի ու առաջնորդի վաստակը, շնորհով անոր անձը, գիտելիքներն ու աշխատելու բնորոշող յատկութիւններուն վրայ, ապա, շնորհաւորանքի խօսքեր ուղղեց, մղթելով ուժ, կորով ու երկար տարիներ:

Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժանապա-



տիւ Տ. Գառնիկ Ա. Քհն. Գոյունեան ընթերցեց յատուկ աղօթք մը՝ նուիրուած ծառայութեան, այնուհետեւ, Գերաշնորհ Տ. Սուրէն Արք. Գաթարոյեան կատարեց սեղաններու օրհնութիւնը:

Սրտի խօսքով հանդէս եկաւ Ազգային Առաջնորդարանի դիւանապետուհի տիկին Տանիա Օհանեան: Ան շնորհաւորեց յորելինական ամեակը եւ նշեց, որ Խաժակ Արքանը ճանչցած է իբրեւ քաջ, մաքուր նկարագրի տէր, համբերատար, ներողամիտ, խոնարհ, տեսիլք ունեցող, գործունեայ ու ձգտումի տէր հոգեւոր առաջնորդ մը, որ համակ կեանք մը ընծայաբերած է ժողովուրդին ծառայութեան անմահական ատրուշանին, դառնալով անխոնջ աշխատող եւ ներշնչումի անսպառ աղբիւր:

Երեկոյն յագեցած էր գեղարուեստական կոկիկ յայտագիրով: Դասական, ժողովրդային ու հայրենասիրական երգերով ելոյթ ունեցան Հոգեշնորհ Տ. Վարդան Վրդ. Թաշճեան, Հոգեշնորհ Տ. Գարեգին Վրդ. Շիւրաթեան, Բարեշնորհ Յարութ Սրկ. Կիւլոյեանն ու Եսայի Սրկ. Մանուկեան:

Այնուհետեւ, սրտի խօսք արտասանեց Թեմիս Առաջնորդ Գերշ. Տ. Բաբգէն Արք. Ջարեան: Ան ողջունեց ներկաները, գոհութիւն յայտնեց այս գեղեցիկ սիրոյ սեղանին համար եւ երկար ու առողջ կեանքի բարեմաղթութիւններ փոխանցեց Խաժակ Արքանին, նշելով որ ան աւելի քան 50 տարիներ իր կեանքը ի սպաս դրած է հայ եկեղեցւոյ ու հայ ազգին՝ մեծ ներդրում ունենալով Թեմիս հաստատման, կազմակերպման ու յառաջացման աշխատանքին մէջ. շնորհիւ իր աշխատասիրութեան, ուղղամտութեան եւ յանձ-

նառու նկարագրին կրցած է փարատել բոլոր տեսակի դժուարութիւններն ու խոչընդոտները՝ Թեմիս պատմութեան մէջ թողելով ոսկեայ տառերով ամրակուռ անուն մը: «Ան իր բովանդակ կեանքը նուիրաբերած է հայ ազգին ու մեր եկեղեցիին, աննկուն կամքով, խոհեմութեամբ, զգօնութեամբ ու մանաւանդ նախանձախնդրութեամբ մօտեցած է իր կոչումին», եզրափակեց Առաջնորդ Արքանը:

Հանգիստութեան եզրափակիչ խօսքը արտասանեց յորելեարը՝ Խաժակ Արքանը: Ան փառք ու գոհութիւն յայտնեց Աստուծոյ, իր երախտագիտութիւնը յայտնեց Վեհափառ Հայրապետին, ողջունեց ներկաները, ապա գոհունակութիւն յայտնեց այս ձեռնարկի կազմակերպման եւ արտասանուած խորագրեց խօսքերուն ու բարեմաղթանքներուն համար:

Անդրադառնալով իր եկեղեցականի կեանքի աւելի քան 50 տարիներու փորձառութեան, Խաժակ Արքանը նշեց, որ բոլոր հանգրուաններուն եւ ամէն տեղ եղած է Աստուծոյ ու ժողովուրդին համեստ ծառան, իր ծառայութիւնը ի սպաս դրած է Աստուծոյ փառքին, եկեղեցւոյ պայծառութեան եւ հայ ժողովուրդի հոգեւոր ու ազգային կեանքի բարօրութեան, փոխադարձ հասկացողութիւնը, անկեղծութիւնն ու համեստութիւնը դարձնելով իր կեանքի նշանաբանը:

Նշենք, որ ՀՄԸՄ-ի Շրջանային վարչութիւնը Խաժակ Արքանին յանձնեց յուշանուէր մը:

Մեծարանքի հանդիսութիւնը վերջ գտաւ «Պահպանիչ»-ով եւ «Կիլիկիա» մաղթերգով:

Այցելեցեք **hitunes.ca** կայքէջը եւ օրական 24 ժամ ունկնդրեցեք Սառա Եղիայեանի կողմէ ընտրուած հայկական երգերը

HITUNES.CA

Ունկնդրեցեք **triktrak.ca** կայքէջի հայկական համացանցային ռատիոժամի երգերը օրական 24 ժամ, իսկ ամէն հինգշաբթի երեկ. ժամը 8:00 - 9:00 լսեցեք շահեկան հարցազրոյցներ

TRIKTRAK.CA

Chadir Meat & Restaurant

T. 416-750-7404
T. 416-750-7400
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4
E-mail: info@ghadirmeatmarket.com

BAKERY AND FINE FOODS

OPEN 7 DAYS A WEEK!
WEEKDAYS 9 am - 7 pm
SATURDAY 9 AM - 6 PM
SUNDAY 9 AM - 5 PM

LOCATION: 2094 LAWRENCE AVENUE EAST
ON THE NORTH-EAST CORNER OF LAWRENCE AND WARDEN

Noor Fine Food
Gourmet Mediterranean Cuisine

1 High Meadow Place, Unit 9
Toronto, Ontario M9L 2Z5

Tel 416 745 3111
Fax 416 745 9337

ANI Restaurant

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

Sutton

Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0

Annie Varbedian
Sales Representative

Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9367
annievarbed@hotmial.com
www.suttongroupadmiral.com

hearing aid source

Andre Ayvazyan HIS B.A.S.

andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

Crown Pastries
Fine Middle Eastern Pastries

2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)
Toronto, ON. M1R 2Z5

Tel 647.351.2015
www.crownpastriesbaklava.com

I.D.A.
Part of the **Royal** family of pharmacies.

Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian

Cassandra Pharmacy Inc.

2040 Victoria Park Ave.
Toronto, Ontario
M1R 1V2

Tel. : **416.449.2040**
Fax: **416.449.2048**

ANI BAKERY
ԱՆԻ ՓՈԱՊԱՆ

Middle Eastern Pizza
Lahmajoun

ARSEN DABBAGHIAN

25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8

Tel: 416.285.7164

Ընկեր Հրապր Մարուխեանի Կտակին Այժմէական Թելադրականութիւնը ' (Մահուան 20-րդ Տարելիցին Հետքերով)

Ձեռնարկի մը աշխատանքներու յորձանուտին մէջ ալ աւելի ամրագրուեցան համոզումներս տարաբախտ մեր ընկերոջ՝ Հրայր Մարուխեանի անմնացորդ ծառայութեան կարեւորութեան ու ազգային–կուսակցական կեանքին մէջ իր ունեցած առանցքային դերակատարութեան մասին։ Ձեռնարկի յայտագիրին ընդմէջէն սոսկ մահուան 20–րդ տարելից յիշատակելու հարց չունեցանք մեր մտքին մէջ, յաւուր պատշաճի պարտք տալու համար չներկայացանք։ Փնտռտուքը՝ կորսուած ինքնութեան մը ու զայն վայելած չրլլալու ամսոսանքը մեզ մղեցին ոչ շատ հեռու պատմութեան էջերուն մէջ որոնել մեր դիմակայած աշխմու մարտահրաւէրներուն պատասխանը։ Այլ հայորդիներու յիշատակարանը թերթատելով, հոն անթեղուած դէպքերու ու դրուագներու արտահանումով եւ անոնց պատշաճ ներկայացումով՝ ազգային, կուսակցական, կազմակերպական պատուանդանը աւելի հզօրացնելու ու տոկուն դարձնելու ազնիւ դիտաւորութիւնը մեր սեւեռակէտը դարձուցինք։ Վերջապէս, փորձեցինք մեր շրջապատը ներշնչել եւ կրկին լիցքաւորել մօտիկ անցեալին ճառագայթող մեծ հայու դաշնակցական խոյանքով։

Ապա ներկայացումներուն ընդմէջէն ընդգծուած ձեւով տեսանք, թէ ինչպէ՛ս դաշնակցական հաւաքական դեկավարութեան գործելաոճը կը նուիրագործուի՝ հեռու պահելով դեկավարման ձեւաչափը՝ եսակեդրոնէն։ Թէ ինչպէ՛ս պատասխանատու ընկեր մը, մեկնած այդ հասկացողութենէն, կ'առաջնորդէ զանգուածները ու կը բոցավառէ խամրած հոգիները։ Այսպէս, հաւաքական դեկավարման եղանակին մէջ, չափով մը, դեկավարի սեփական դրոշմը կը հունաւորէ որոշումի գործնականացումը։ Խօսքին, արտայայտութեան ձեւին ու որոշումի գործնականացման ու աշխատանքի դասաւորումներուն կու տայ հատու երանգ։ Անկասկած որոշումի հասնիլը պէտք է համարուի համայնական քննութեան իրաւունք, զոր կը պատկանի համապատասխան մարմինին կամ ժողովին։ Որոշումը գործադրելու ու զայն հանրային ընդունելի հանգամանքի վերածելու հրամայականը ազդեցիկ հնչեղութիւն ունենալու, աւելի հաղորդական ու անմիջական ըլլալու համար կ'երանգաւորուի դեկավարին դրոշմով, սեփական ճաշակով ու ինքնատիպ վարքով եւ կը թափանցէ տուեալ շրջապատին կամ ընկերութեան մէջ այնպիսի ձեւով մը, որ իւրացուի մեծամասնութեան կողմէ ու բոլորին համար համոզում դառնայ։ Այս բոլորը կը հրամցուին ըստ պահու թելադրականութեան, երբեմն խստաբարոյ, երբեմն մեղմ եղանակով՝ յազուրդ տալով հանրային սպասումներուն։ Նմանատիպ դեկավարման արուեստին քաջածանօթ էր ընկ. Մարուխեանը ու իր բարձրորակ իմացականութեամբ զայն դարձուցած էր իր ուղեները։

Նեղզ դասաւորումներով, երբ իր դաշնակցական «ես»–ը խոցուեցաւ, երբ փորձուեցաւ իրմէ խլել ծոցին մէջ ծնած, մատղաշ ու այնքա՛ն խնամքով փայփայած դեռատի պետականութեան կազմաւորման պերճանքը վայելելու պատեհութիւնը՝ «մեծ երազի» փաստարկը, բոլորին ուշադրութիւնը հրաւիրեց Հայաստանի պետականութեան վարկն ու հայրենիքին շահերը գերակշիռ համարելու հրամայականին վրայ։ Այդ օրերուն, հակառակ ընկերական շարքերու մեծամասնութեան այն տեսակէտներուն, որոնք կ'առաջադրէին հակազդող կարծր կեցուածք, «մարուխեանական» խոհականութիւնը վարակիչ հանգանակ դարձած՝ յաղթանակեց։ Այսպիսով, նախագահական խնդրալարոյց հրամանագիրը, որ կը փորձէր ջրբաժան ստեղծել դաշնակցական ընտանիքին մէջ, վիժեցաւ՝ յանձինս դաշնակցական ընտանիքի արթնամտութեան եւ ընկեր Հրայրի ողջմտութեան։ Վերջապէս, հայրենիքին խնայուեցաւ բարդ իրավիճակներ ապրելու ոչ նախանձելի կացութեան յառաջացումը, որ կրնար վտանգել մատղաշ Հայաստանի կայունութիւնը՝ խոցելի դարձնելով անոր ազգային անվտանգութիւնը։

Միայն տիտանները կրնան նման հոգեվիճակներու յառաջացուցած ճնշուածութեամբ չկաղապարել իրենց որոշումները եւ սոսկ հակազդողի դիրքերէ չառաջնորդել հասարակութիւնը։ Ընկեր Մարուխեանը կացութիւնները արագ ընկալելու եւ կուռ տրամաբանութեամբ արժեւորումներ կատարելու ունակութեամբ զրահապատուած՝ դաշնակցական դեկավարի իւրայայտուկ վայելչութեամբ կ'արձագանգէր տուեալ հարցին

ու համապատասխան լուսաւոր ելքեր կ'ուրուագժէր անել իրավիճակներէն ու փակուղիներէն դուրս գալու համար՝ միշտ դաշնակցական կողմնացոյցը աչքին առջեւ ունենալով։

Ան օրինակելի առաջատարը հանդիսացաւ՝ հայկական քաղաքական բոլոր ուժերուն ճիգերն ու նախաձեռնութիւնները համայնական մէկտեղումի մը հասցնելու, միշտ առաջադրեց լաւագոյնին վստահիլ հանրային գործն ու պաշտօնը՝ առանց հատուածական մօտեցումի, նոյնի՛սկ վեհանձնութիւնը ունենալով ձեռք երկարելու անոնց, որոնք ամէն առիթ կ'օգտագործէին երկարած այդ ձեռքը անճիտելու ու միասնութեան տեսլականը վիժեցնելու։

Իր վարչական, մտաւորական ու քաղաքական գործիչի բարեմասնութիւնները կենսատու պահելով՝ զանոնք շաղախած էր դաշնակցականի յեղափոխական աւանդներով եւ մարտունակութեամբ, որոնք կը դրսեւորուէին իր գաղափարական խստաբարոյ անգիջողականութեամբ։ Գալով քաղաքական արեւելումին՝ անիկա Մարուխեանի մօտ միշտ պայմանաւորուած ու զուգորդուած էր դաշնակցական աւանդոյթով՝ խարսխուած դաշնակցական պատմական փորձէն ժառանգուած անսպառ սկզբունքներու վրայ։

Ղեկավարի սահմանումը կը տարուբերի։ Դաշնակցութեան պարագային, դեկավարին մէջ առաւելաբար խտացուած պէտք է տեսնել անմնացորդ նուիրում, անանձնական վարքագիծ՝ օծանուած գաղափարական յանգձնութեամբ ու հաւատարմութեամբ։ Այսպէս, ընկեր Հրայրի քաղաքական–ռազմավարական խոհեմութիւնը, ընկեր Զէյթիեանի՝ գաղափարի մարտիկի անհատնում շունչը, ընկեր Տասնապետեանի պեղող ու հետազօտող անաչառ գրիչը բոցավառեցին մատղաշ սերունդներուն հոգիները, ու շատե՛ր այդ եռեակը համարեցին վաղ անցեալի նուիրեալներու վերապրող շառաւիղները, անհուն բանակի հսկաներուն՝ Քրիստափորին, Զաւարեանին, Նաւասարդեանին, Զամալեանին ու Վարանդեանին նման մեծութիւններ։ Այսպէս, ընկ. Հրայրն ու իրեն միացած գործընկեր ու դեկավար շրջանակը շատերու համար ուղղորդող կարեւորութիւն ունեցաւ։ Անոնք՝ դաշնակցական իրենց օրինակով երիտասարդ կուսակցականներու դաշնակցականի կազմաւորման գործընթացը կուանելով՝ յաջողեցան դաշնակցական աւանդութիւններու ժառանգութիւնը ամրագրել երիտասարդ ուխտեալներու հոգեմտաւոր աշխարհին մէջ։

Ընկեր Մարուխեան ուրիշը ընդունելու ու հանդուրժելու հանդարտաբարոյ նկարագիրով օժտուած էր։ Ան կ'ունկնդրէր ու կը գրուցէր մեծին ու փոքրին, նորեկին ու աւագին, հանրայայտին ու ռամիկին հետ, ջանալով քաղել դրակներ իր գրուցակիցէն, ջանալով իր սեփական փորձին ընդմէջէն դաշնակցական երանգը վառ պահել։ Միւս կողմէ, յարգելով այլախոհ մտաւոր թոխչքները, երբեմն նոյնիսկ արտառուց, ոչ համընկնող մտածողութիւնները, անոնց արտայայտուելու առիթ կուտար դաշնակցական մամուլին մէջ՝ թելագրելով համապատասխան ուղղորդող խմբագրականներով կամ պատասխան յօդուածներով ճշդել «Դաշնակցական ուղին»։ Այս ամէնը ի գործ դնելով հանգերձ, կը ծառանար, երբ վտանգուած կ'ըլլար կազմակերպական կուռ պատուանդանը։ Ան չեջտակի նախանձախնդրութեամբ պահապան էր դաշնակցական աւանդութեանց, եւ հանդուրժողականութիւնը պայմանաւորուած էր կուսակցական կարգապահութեամբ։ Կը հաւատար, որ դաշնակցական ժողովի ներքոյ՝ ինքնաքննադատութիւնը եւ ինքնախարազանումը՝ ինքնաճանաչութեան բանալի ազդակ է եւ ինքնամաքրման ու տեսակէտներու բիւրեղացման կ'առաջնորդէ՝ մինչ վերջնական որոշումի յանգումը։

Սփիւռքեան սերունդներու դաստիարակութիւնն ու կազմաւորում՝առաւելաբար խարսխուած էր ազգապահպանման, սգատօներու ոգեկոչման, գաղթօճախներու կարիքները հոգալու խնդիրներուն վրայ։ Աւելի ուշ պահանջատիրութեան ու Հայ դատի աշխատանքներուն շուրջ կը բոլորուէին սերունդներու ազգային կիզակէտերը։ Հասաւ հանգրուան մը, երբ Դաշնակցական ընտանիքին համար անխուսափելի հրամայական էր նոր աւելշ սերմանել ու ականջալուր ըլլալ արդի ժամանակներու բազկերակին։ Դաշնակցական ժողովներով նուիր



րականացուեցաւ այդ բարենորոգչական անկիւնդարձը։ Անոնց գործադրութեան յանձնարարականները վստահուեցան ընկեր Մարուխեանի դաշնակցականի տեսլականին ու իր գործընկերներու աներկբայ դերակատարութեան։ Ընկեր Հրայր եւ իր ընկերները եղան այն հեղինակութիւնները, որոնք դարձան ջերմեռանդ ջատագովները սերնդափոխութեան եւ գաղափարական վերանորոգման շարժումին առաջամարտիկները՝ շուռ տալով ընկալեալ ճահճացած սովորամոլութիւնը, թանձրացած աշխատանքային միապաղաղութիւնը, նոր մտածողութեամբ համակելով դաշնակցական շարքերը, կազմակերպական վերանորոգ շունչով կենդանութեան կենարար նոր աւելշ տալով ամլացած պահպանողական մտայնութիւններուն։ Ձխուսափելով հրապարակային սուր բանավէճերէ՝ «Դաշնակցական բեմ»–ին ընդմէջէն մամլոյ դիւանի նորաստեղծ կառույցով, ականջալուր ըլլալու նորանոր մտքերու ու իրենց Դաշնակցական փորձովը զանոնք ուղղորդեց յօգուտ գաղափարներու բիւրեղացման ու դաշնակցական որոշումի ամբողքման։

Հնամենի օրինաչափութիւններու կարգը փոխուեցաւ, ու այդ հոյլ մը նուիրեալները յաջողեցան առաւել ե՛ւս զարթնեցնել պետական մտածողութեան վարժութիւնը ունենալու կարեւորութիւնը, թէկուզ՝ առանց ազատ, անկախ հայկական պետականութեան իրաւական ներկայութեան։ Երբ ազատ ու անկախ հայրենիքի գաղափարը կրկին միս ու ոսկոր ստացաւ, տակաւ առ տակաւ վերընձիւղուեցաւ դաշնակցական քաղաքական մտածողութեան մէջ պետական համակարգի մէջ գործելու ունակութիւնը։ Այլեւս հարկաւոր էր բոլոր ազգային գերխնդիրները բացատրել, դիտել եւ հասկնալ ազատ, անկախ ու ինքնիշխան հայրենիքի ու պետականութեան տարագին ներքոյ։ Կրկին Դաշնակցական ընտանիքին մէջ կեանք առաւ անթեղուած գործօնը՝ ինքնիշխան պետական քաղաքական մտածողութեամբ գործելու հրամայականը։ Դաշնակցական քաղաքական միտքը կրկին ուրուագծեց ու զուգորդեց այս հանգամանքը՝ դաշնակցական դաստիարակութեան այբուբենին, հաշուի առնելով անոր բոլոր նախադրեալները, ի մասնաւորի՝ ազգային անվտանգութեան ու սեփական հայրենիքի հողային տարածք պահպանելու գերխնդիրները։ Դաշնակցականի քաղաքական տեսադաշտը սոսկ նեղ տարածքի սահմաններէն դուրս գալով՝ պիտի ընդարձակուէր ու պարփակէր ամբողջական ազգ ու ամբողջական անկախ հայրենիքը յաւերժական արժեհամակարգի պահպանումը՝ հաշուի առնելով տարածաշրջանային ռազմա–քաղաքական գարգացումներու հոլովոյթը։

Ընկեր Մարուխեանին ներդրումը այդ իմաստով անուրանալի է։ Իր անմնացորդ կտակը՝ պէտք է պահպանելու իր տեսակը եւ պէտք է ըլլայ վարակիչ։

Ընկ. Էդիկ Յովհաննիսեան իրաւացի էր, երբ ընկեր Մարուխեանին մասին դամբանական խօսքը կ'աւարտէր՝ ըսելով. «Ինչ կ'ասէր ընկեր Հրայրը այսօրուան խնդիրների մասին»։

Ազգովին՝ ականջալուր պիտի ըլլանք այդ անժամանցելի թելադրականութեան։

ԺԱՆ ՀԱԼԼԱԾԵԱՆ

ՌԻՄԱՆՈՐԻՉ

ԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ



Բ. ՏԱՐԻ ԹԻԻ 12

ՆՈՅԵՄԲԵՐ

NOVEMBRE | NOVEMBER

Year 2 | Année 2

No. 12 - 2018

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԽՕՍՔ

ՍՈՒՐԵՐԸ ՆԵՐՇԵՉՄԱՆ ԱՐԻԻՐ ԵՒ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՏԻՊԱՐՆԵՐ



ԲԱԲԳԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Առաջնորդ՝ Գանատայի Հայոց Թեմի



«Եթե չ'ապաշխարեք, բոլորդ ալ կը կորսուիք»

Ամէն տարի Նոյեմբեր ամսուն կը նշենք Ամենայն Սրբոց Տօնը:

Ինչո՞ւ բոլոր սուրբերու տօն, երբ իւրաքանչիւր սուրբի համար յատուկ օր է ճշդուած տօնելու: Ամենայն Սրբոց անուան տակ եկեղեցին նկատի ունի իր կողմէ ճանչցուած երկրային բոլոր այն անձերը մարգարէներ, առաքեալներ, մարտիրոսներ, քարոզիչներ, վկաներ, ճգնաւորներ, նահատակներ, եկեղեցւոյ հայրեր, որոնք Սուրբ Հոգիով շնորհագարդարուած, դարձած են Աստուծոյ մեծ բանակին հաւատարիմ զինուորները:

«Սուրբ» բառին անմիջականօրէն կապ ունի նաև «Սրբութիւն» բառը: Յաճախ հարց կը տրուի թէ ինչ կը հասկնանք «Սրբութիւն» ըսելով, Սրբութիւնը գերբնական, երկնային արարածներու յատուկ վիճակ մըն է: Պատասխանելով այս հարցումին կ'ըսենք ոչ: Սրբութիւնը հեռու չէ մեզմէ, երկնային արարածներու յատուկ վիճակ մէջ է, այլ երկրաւոր կեանքի մէջ թափանցուած երեւոյթ մըն է: Իսկ երբ մէկը արժանի կը դառնայ այդ սրբութեան, երբ եկեղեցին կը հռչակէ, ժողովուրդը կը կոչէ երբ սուրբ կը հռչակէ Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած մեր նմանը մարդը: Բնականաբար, սրբութեան արժանի կը դառնայ եւ կամ սուրբ կը հռչակուի այն մարդը, որ իր ապրած կեանքով, քրիստոնեայի յատուկ ողջախոհութեամբ, անբասիր ու բարեպաշտ կեանքով, քաջութեամբ ու հաւատքով, հրաշագործութեամբ եւ կամ նահատակութեամբ Յիսուս Քրիստոսի կը հետեւի:

Տակաւին այլ հարց չիւ եւս մեր հաւատացեալներուն մտքերը կը չարչրկէ, արդեօք սուրբերուն պէտք է պաշտամունք մատուցել: Այս հարցին եւս կը պատասխանենք. պէտք չէ պաշտամունք կատարել, այլ պէտք է մեծարել: Անոնք մեր յարգանքին ու մեծարանքին արժանի են: Անոնք մեզի համար ներշնչման աղբիւրներ են և օրինակելի տիպարներ: Յաճախ իրենց բարեխօսութեան կը դիմենք առ Աստուած մեր աղօթքները աւելի լսելի դարձնելու եւ մեր խնդրանքները ներկայացնելու:

Աստուածաշունչը յստակ պատգամ մը կու տայ. «Եթե չ'ապաշխարեք, բոլորդ ալ կը կորսուիք». հետեւաբար, անհրաժեշտ է ԱՊԱՇԽԱՐԵԼ, այսինքն մեղքէն, չարէն եւ ապականութենէն հեռու մնալ, փոխել կեանքի ընթացքը, սրբազոյն կեանքի ընթացքը եւ վերադարձի ճամբան բռնել դէպի Գերագոյն Բարին, դէպի Կատարեալը, դէպի մեր Երկնաւոր Հայրը Աստուած: Իսկ Աստուած մեզի կը շնորհէ արդարներու յատուկ յաւիտենական կեանք-ժառանգութիւնը:

Եկէ՛ք, իւրաքանչիւրս որպէս քրիստոնեայ անհատ, մաքուր եւ առաքինի կեանք մը ապրինք: Կեանք մը որ հաճելի ըլլայ Աստուծոյ, կեանք մը որ լեցուն ըլլայ ՍՐԲՈՒԹԵԱՄԲ:

ԴԱՍԵՐ՝ ՃՇՄԱՐԻՏ ԲՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԿԵԱՆՔ ԱՊՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆԸ

Աստուածաշունչ Մատենան կամ Մուրբ Գիրքը կը բաժնուի երկու հիմնական մասերու. Հին եւ Նոր Կտակարաններու:

Հին ԿՏԱԿԱՐԱՆ
Հին Կտակարանը Նոր Կտակարանի մասին վկայող, գալիք իրականութիւններու, վրայ լոյս սփռող, անոր ատենաբերը հանդիսացող բազմաթիւ իրադարձութիւններու, յայտնութիւններու եւ մարգարէութիւններու ժողովածու է: Բաղկացած է չորս հիմնական մասերէ. Մովսէս մարգարէի Հնգամատեանը, Պատմական, Իմաստութեան և Մարգարէներու գրքերը:

ՍՈՎՍԷՍ ՄԱՐԳԱՐԷԻ ՀՆԳԱՄԱՏԵԱՆԸ (ՕՐԷՆՔ)
Ծննդոց
Կը կոչուի նաեւ Գիրք Արարածոց: Կը բովանդակէ աշխարհի եւ մարդու ստեղծման, նախամարդուն մեղանշումին և դրախտէն վտարման, ինչպէս նաեւ նահապետներու եւ Իսրայէլի նախահայրերու պատմութիւնները:



ՀՈԳԵՒՈՐ

Եկեղեցւոյ կեանքին մէջ եղած են սուրբեր, որոնք անձանօթ և անյայտ մնացած են մարդոց համար, այնպէս ինչպէս շատ զինուորներ պատերազմներու ժամանակ: Այս պատճառով ալ, անյայտ ու անձանօթ զոհուած զինուորներու յիշատակը յարգելու համար, ժողովուրդներ ունեցած են գեղեցիկ մտայնացում, կանգնեցնելով անյայտ զինուորի յուշարձաններ:

Եկեղեցւոյ մէջ անյայտ մնացած սուրբերու համար հաստատուած է տօն մը, զոր կը կոչենք ԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ, ՀՆՈՑ ԵՒ ՆՈՐՈՑ, ԾԱՆՕԹԻՑ ԵՒ ԱՆԾԱՆՕԹԻՑ, ՅԱՅՏԻՑ ԵՒ ԱՆՅԱՅՏԻՑ. տօն մը, որով կը հասկցուին ոչ թէ Հին և Նոր Ուխտերու սուրբերը, այլ հին և նոր այսինքն միւսն է մեր ժամանակները հասնող անանուն սուրբերը: Այս տօնը քրիստոնեական բոլոր եկեղեցիներուն ալ յատուկ է. Լատինները զայն կը նշեն իբրև մեծագոյն տօններէն մէկը, Նոյեմբեր 1-ին, և մարդիկ այդ օր գերեզման կ'երթան իրենց ննջեցեալները յիշելու. մենք զայն կը նշենք ոչ նոյն օրը, այլ անոր մօտաւոր Շաբաթ օրը:

Սուրբ բառը իր լայնագոյն իմաստով կը նշանակէ արդար, աստուածահաճոյ: Իր իմաստին մէջ կայ նաև այն ինչ կը պատկանի Աստուծոյ: Քրիստոնէութեան առաջին օրերուն զիրար այսպէս կը կոչէին հաւատացեալները. բայց յետոյ այդպէս սկսան կոչուիլ յատկապէս իրենց առաքինի կեանքով, հաւատքի և եկեղեցւոյ համար իրենց օգտակար և ծառայական գործունէութեամբ նշանաւոր հանդիսացած և նահատակութեամբ իրենց կեանքը պսակած անձեր:

Սրբութեան ամենէն վաւերական ապացոյցը մարտիրոսութիւնն է, որովհետև մարդուն համար իր կեանքը տալը ամենամեծ զոհողութիւնն է յանուն սիրոյ: Այս զոհողութիւնը երբ կամքով ու համոզումով է եղած, կը սրբէ անցեալի արատները և իր ազդեցութիւնը կ'ունենայ նաև ապրողներու վրայ: Սրբութեան ապացոյց կը համարուի նաև երկնային վկայութիւնը, հրաշքներով արտայայտուած, ինչպէս նաև Սուրբ Գրքին մէջ անոնց մասին եղած յիշատակութիւնը կամ արժանահաւատ անձերէն փոխանցուած տեղեկութիւնը:

Սուրբերու մահէն զատ, երբեմն կը տօնուի նաև անոնց կեանքին կամ յիշատակին կապուած որևէ իրողութիւն, որ քրիստոնէութեան համար ունի կարևոր նշանակութիւն:



ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

Ոմանք տոտեմի տեսությամբ փորձած են բացատրել կրոնքի ծագումն ու կրօնական զգացումը: «Տոտեմ»ը հիւսիսային Ամերիկայի հնդիկներէն (կարմրամորթ) վերցուած բառ մըն է կը նշանակէ բոյսերու եւ անասուններու պաշտամունք: Տոտեմականութեան մէջ բազմաթիւ տոհմեր գոյութիւն ունին եւ իւրաքանչիւրը միւսներէն կը զանազանուի իր նախահայրերով: Խումբի, տոհմի կամ ցեղի համար տոտեմը սրբութիւն կը համարուէր:

Ոմանք իրենց համար որպէս տոտեմ ունէին կոկորդիլոսը, ուրիշներ այլ կենդանիներ, ծառեր կամ բոյսեր: Այն կենդանին կամ ծառը, որ կ'ընդունէին որպէս տոտեմ, կը համարէին իրենց նախահայրը, այսինքն կը հաւատային, որ անոնք այդ կենդանիէն կամ ծառէն առաջ եկած են: Յարգանքով ու երկիւղածութեամբ կը վարուէին անոր հետ: Այդ կենդանին չէին որսար կամ սպաններ, տոտեմ համարուած ծառը չէին կտրեր: Գերդաստանի անդամները իրենց մարմնին վրայ նկարել կու տային տոտեմի պատկերը:

ԳԻՇԵՐՈՒԱՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆՆԵՐՍ

«Մամ, կրնա՞մ քիչ մը քովդ պառկիլ, բնաւ քուն չունիմ», - մութին մէջ կը նշմարեմ աղջիկս, որ ականջիս կը փսփսայ: Ես ալ արթուն եմ տակաւին: Կը նայիմ սեղանի վրայի ժամացոյցին, որուն կարմիր աչքերը կ'ըսեն որ առաւօտեան ժամը երկուքն է: Ամէն կողմ մութ ու լուռ է: Տան մէջ գտնուող մեր ընտանիքի միւս անդամները խոր քունի մէջ են: Աղջիկս կը պառկի անկողինիս եզերքը եւ քանի մը վայրկեան յետոյ արդէն քունի անցած է: Իսկ ես արթուն եմ, կարծես առտու եղած ըլլայ:

Վերջերս անքնութենէ կը տառապէի եւ գիտեմ որ հազարաւորներ նոյն վիճակներէ կ'անցնին: Թէեւ ֆիզիքապէս շատ յոգնած կը զգամ երբ անկողին մտնեմ, սակայն քուն մը քաշելէս յետոյ, յանկարծ կ'արթննամ եւ ժամերով արթուն կը մնամ: Նախ կը փորձէի ետ քնանալ, աջ ու ձախ դառնալէն կողերս կը ցաւէին ու աչքերս պինդ փակելէն կռպերս կը ճարթկուէին կարծես, բայց անօգուտ: Ինքզինքս կը խաբէի սուտ քուն ձեւացնելով, սակայն միտքս շատ արթուն էր: Առաւօտուն գործ ունիմ, մարմինս եւ միտքս հանգչելու են, պէտք է կ'ազդուրուիմ, որ արդիւնաբեր նոր օր մը ունենամ:

Այս բոլորը փորձելէ յետոյ, շատ անգամներ տակաւին կէս գիշերուան պզտիկ ժամերուն արթուն վիճակ մը կ'ունենայի: Շատ անգամներ կը խորհէի կամացուկ մը ելլել անկողինէս, կարդալ կամ գրել, կիսատ ձգած գործերս ամբողջացնել, բայց գիտէի, որ քնանալու ժամանակ է, եւ կրնայի կողակիցիս կամ զաւակիս խանգարել:

Գիշեր մը մտաբերեցի Եսթեր Թագուհիին պատմութենէն Ասուերոս Թագաւորը, որուն քունը երբ փախաւ, յիշատակաց գիրքը սկսաւ պրպտել եւ Մուրթբէի բարեգործութիւնը երեսան հանելով անոր արժանի պատիւը շնորհեց (Եսթեր 6:1): Ես ալ որոշեցի այլեւս չպայքարիլ անքնութեան դէմ, այլ յիշողութեան էջերը թերթատելով օգտագործել գիշերուան խաղաղ ժամերը, եւ Տիրոջս հետ մտերիմ յարաբերութիւն մը մշակել: Յիշեցի այս համարը, որ կ'ըսէ. «Հանդա՛րտ կեցեք ու ճանչցեք, որ ես եմ Աստուած» (Մդ 46:10):

Այս որոշումէս յետոյ յոգնաբեկ մարմինս սկսաւ հանդարտիլ: Այլեւս չէի ջանար քնանալ, այլ գիշերուան լռութեան մէջ, երբ քունը աչքերէս խոյս կու տար, ինքզինքս Տիրոջս յանձնած, կը սկսէի աղօթել, փառք տալով Իրեն այդ օրուան պատահածներուն համար: Ապա կը շարունակէի շնորհակալութիւն յայտնել ինծի հասած Փրկչիս Մեծ շնորհքին համար, փրկութեան վստահութեան եւ յաւիտենական կեանքի պարգեւին համար: Կ'աղօթէի պատուական կողակիցիս, սիրասուն զաւակիս եւ սիրելի հարազատներուս համար, յիշելով իւրաքանչիւրին բարեմասնութիւնները եւ պէտքերը: Աստուծոյ գահին առջեւ կը բերէի Եկեղեցիս ու անոր կարիքները, նաեւ գործակիցներս, հիւանդները, անգործները, նիւթական, ընտանեկան կամ հոգեկան նեղութիւններէ անցող բարեկամներս ու ծանօթներս: Մինչ ժամերը կը սահէին, սիրտս երկնային սիրով եւ հրճուանքով կը լեցուէր ու կը սկսէի սաղմոսներով ու երգելով փառաբանել Տէրը, որ հոգիս կը նորոգէր եւ միտքս կը պայծառացնէր, որպէսզի կարենամ ըսել. «Կէս գիշերին կ'ելլեմ Քեզի գոհութիւն մատուցանելու, Քու արդար դատաստաններուդ համար» (Մդ 119:62):

Հրահաս

Տոտեմականութիւնը կը համարուի նաեւ հասարակութիւն մը իր ինքնուրոյն դրուածքով, եւ այդ ուղղութեամբ բազմաթիւ ուսումնասիրութիւններ եւս գոյութիւն ունին:

Ինչպէս վախի եւ ոգեպաշտութեան պարագային, տոտեմականութեան տեսությամբ եւս միայն կարելի է բացատրել կրօնի ծագումը: Մանաւանդ որ տոտեմի մէջ կը նկատուի նաեւ ոգիի պաշտամունքը:

Կրօնքի ծագումն ու զգացումը բացատրող այլ տեսութիւններ եւս գոյութիւն ունին, ինչպէս օրինակ մոգութիւն, կախարդութիւն եւ այլն, բայց խորքին մէջ բոլորն ալ ոգեպաշտութեան տարբեր ձեւեր են: Քանի որ մոգութիւն եւ կախարդութիւն կատարելով կ'աշխատէին իրենց կամքը պարտադրել ոգիներուն վրայ:

Այսպէս, ուրեմս, կրօնական զգացումի եւ կրօնքի ծագման համար բազմաթիւ տեսութիւններ գոյութիւն ունին, որոնք քիչ թէ շատ համոզիչ գաղափարներ եւս կը պարունակեն:

Շար. 4

ՍՈՒՐԲԵՐԸ ԵՒ ՄԵՆՔ

ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵՐԵՐԱՆ



Ընդհանրական եկեղեցւոյ այս սուրբը՝ Յովհան Ոսկեբերան, ծնած է 347-ին Անտիոք: Փոքր տարիքէն կորսնցուցած է իր հայրը. մայրը անոր կրթութիւնը ապահովելու համար, զինք յանձնած է ժամանակի ամենահռչակաւոր հռետորներէն ու ճարտասաններէն Լիբանիոսի:

Անցնելէ ետք եկեղեցական կարգերէն, 398-ին Կ. Պոլսոյ Պատրիարք կը ձեռնադրուի: Պատրիարքութեան շրջանին անոր կը հակառակի Եւդոքսիա թագուհին, որ կը յանդիմանուէր հայրապետին կողմէ իր յոռի սովորութիւններուն պատճառով: Իր թշնամիներուն սաղորանքով 403 թուականին կ'աքսորուի. կարճ ժամանակ մը ետք, արքունիքը մտահոգուելով ժողովուրդին զայրոյթէն, կը վերադարձնէ հայրապետը: Տարի մը ետք, դարձեալ կ'աքսորուի եւ ճանապարհի դժուարութիւններուն չդիմանալով կը մահանայ 407 թուին: Կը պատմուի, թէ անոր վերջին բառերը եղած են «Փա՛ռք քեզի Աստուած, փա՛ռք քեզի, ամէն ինչի համար, փա՛ռք քեզի»:

Շուրջ երեսուն տարի ետք՝ 438 թուականին, սուրբին մարմինը մեծ հանդիսատրութեամբ կը բերուի եւ կ'ամփոփուի Կ. Պոլիս:

Սուրբը Ոսկեբերան կոչուած է իր ունեցած ոսկեայ խրատներուն եւ խօսքերուն համար, որոնցմով դարեր շարունակ բազմաթիւ առաջնորդներ եւ եկեղեցական սերունդներ կրթուած են: Շատ մը աշխատութիւններու կողքին, ան յայտնի է իր Աստուածաշունչ մատեանի մեկնութիւններով:

Գարեգին Վրդ. Շիրամեան
Հոգեւոր Հովիւ
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ



ԱՂՈԹՔ

Քու սուրբ Տաճարիդ մէջ և քու սուրբերուդ բարեխօսութեամբ, քեզմէ խնդրողներուս մեղքերուն թողութիւն շնորհէ Տէր, Դուն, որ յաւիտեան փառաւորուած ես. Ամէն:
ՇԱՐՄԿԱՆ



MESSAGE DU PRÉLAT

WESTERN ONES, WESTERN CHURCHES

Les saints sont des exemples à suivre et une source d'inspiration

Chaque année, nous fêtons la Toussaint au mois de novembre. Pourquoi célébrer tous les saints ensemble, lorsque chaque saint a déjà sa propre journée de fête? Sous le nom de la Toussaint, l'Église reconnaît toutes les personnes terrestres, les prophètes, les apôtres, les martyres, les prêcheurs, les ermites, les victimes, les pères d'église, qui ont été dotés de la grâce divine et qui sont devenus les soldats de l'armée de Dieu et du Christ.

Que signifie la sainteté? Est-ce un sort réservé aux êtres surnaturels, célestes? Non. La sainteté n'est pas loin de nous; elle n'est pas un attribut particulier des êtres surnaturels; elle est plutôt un phénomène qui pénètre la vie terrestre. Quand a-t-on droit à cette sainteté? Quand est-ce que l'Église ou bien le peuple décide qu'un être terrestre comme nous est un saint? Normalement, est déclaré saint celui qui, par sa vie et sa foi, par ses miracles ou bien par son martyre, suit Jésus Christ.

Une autre question qui tourmente les pensées de nos fidèles: doit-on vénérer nos saints? Nous répondons de nouveau: «Non.» Il ne faut pas les vénérer, mais bien les honorer. Nous devons leur rendre hommage: nos saints sont une source d'inspiration, ils sont des exemples à suivre. Nous demandons souvent leur intercession auprès de Dieu pour que nos prières soient plus audibles auprès de Lui et pour Lui présenter nos vœux.

